Կարգապահական գործ թիվ ԿԳ-23018

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՎՐԵԺ ՎԱՐԴԳԵՍԻ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստավածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Գուրգեն Թորոսյանի, Հայկ Սահակյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վրեժ Վարդգեսի Ներկարարյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1558), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գիվի Հովհաննիսյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ իր վարույթում գտնվող թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործով, ամբաստանյալ Վոլոդյա Գուրգենի Ուզունյանի շահերի պաշտպանությունն իրականացնում է փաստաբան Վրեժ Ներկարարյանը, ով ծանուցված է եղել 15.03.2023թ. ժամը 12:30-ին կայանալիք դատական նիստի մասին: Մինչև դատական նիստը սկսելը հեռախոսազանգով աշխատակազմին հայտնել է, որ չի կարող մասնակցել նիստին և պատճառների ու հերթական նիստը համաձայնեցնելու մասին դատարանին կուղարկի գրություն:

15.03.2023թ. ժամը 11:58-ին աշխատակազմի էլեկտրոնային հասցեին Վրեժ Ներկարարյանի կողմից ուղարկվել է գրություն, համաձայն որի՝

«Հայտնում եմ Ձեզ, որ Ձեր վարույթում գտնվող քրեական գործով Հովսեփ Վերանյանը դիմել է ինձ փաստաբան Վրեժ Ներկարարյանիս, որպեսզի իրականացնեմ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Նշված գործով դատական նիստը

նշանակվել է սույն թվականի հոկտեմբերի 24-ին, սակայն ես՝ որպես Հովսեփ Վերանյանի պաշտպան, 2022 թվականի հոկտեմբերի 24-ին չեմ կարող ներկայանալ դատական նիստին, քանի որ ունեմ առողջական խնդիրներ. ուստի խնդրում եմ դատական նիստը հետաձգել և նշանակել մեկ այլ օր, որպեսզի կարողանամ մասնակցել նիստին:»

Նկատի ունենալով, որ ներկայացված դիմումը ընդհանրապես որևէ առնչություն չունի թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործին, նշված գործով ամբաստանվում է ոչ թե Հովսեփ Վերանյանը, այլ Վոլոդյա Ուզունյանը, ում շահերի պաշտպանության համար Վրեժ Ներկարարյանը պետք է ներկայանար դատական նիստին և հաշվի առնելով վերջինիս պատշաճ ծանուցված լինելը, դատարանը փաստաբանի բացակայությունը համարել է անհարգելի:

Դիմողը խնդրել է քննարկել փաստաբան Վրեժ Ներկարարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.06.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողի կողմից որևիցե լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Վրեժ Ներկարարյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գիվի Հովհաննիսյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը հայտնել է, որ 15.03.2023թ. հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է աշխատակազմին նշանակված նիստին չմասնակցելու մասին, քանի որ նույն օրը ժամը 11:00-ին Տավուշի մարզի Իջևան քաղաքում թիվ ՏԴ/0197/01/21 քրեական գործով նշանակվել է դատական նիստ, որտեղ փաստաբանը ներգրավված է որպես հանրային պաշտպան: Հատկանշական է, որ տվյալ գործով ամբաստանյալներից մեկի նկատմամբ խափանման միջոց է կիրառված կալանավորում, և վերջինս գտնվում է կալանքի տակ:

15.03.2023թ. գտնվելով հիշատակված նիստին, աշխատակազմի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն փաստաբանը ուղարկել է դատական նիստը հետաձգելու և բացակայությունը հարգելի համարելու մասին գրությունը, այնուհետև վերջինս պարզել է, որ սխալմամբ այլ գրություն է ուղարկել:

Նույն օրը ժամը 17:00-ին դատավոր Գիվի Հովհաննիսյանի նախագահությամբ փաստաբանը ունեցել է մեկ այլ նիստ, որին ներկայացել է, և նախքան դատական նիստը սկսվելը դատավոր Գիվի Հովհաննիսյանը բանավոր հայտնել է, որ սխալ գրություն են ստացել: Փաստաբանը պարզաբանել է, որ տեխնիկական խնդիր է եղել և ճիշտ գրությունը իր մոտ է, նաև բանավոր ևս մեկ անգամ բացատրել է չներկայանալու պատճառների մասին և պարտավորվել է հաջորդ դատական նիստին ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր: Հաջորդ դատական նիստը նշանակվել է 02.05.2023թ. ժամը 16:00-ին, այդ պատճառով էլ,

փաստաբանի պնդմամբ, չի ներկայացվել դատական նիստին չմասնակցելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.06.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանի կողմից որևիցե լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 20.04.2023թ. թիվ 112-Ա/ԿԳ-23018 որոշմամբ փաստաբան Վրեժ Ներկարարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

28.04.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 28.06.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Փաստաբան Վրեժ Ներկարարյանը մինչև դատական նիստը սկսելը հեռախոսազանգով դատարանի աշխատակազմին հայտնել է, որ 15.03.2023թ. ժամը 12:30-ին դատական նիստին չի կարող մասնակցել, 15.03.2023թ. ժամը 11:58-ին Դիմողի աշխատակազմի էլեկտրոնային հասցեին Վրեժ Ներկարարյանի կողմից ուղարկվել է գրություն, Փաստաբանը 15.03.2023թ. ժամը 11:00-ին ունեցել է մեկ այլ դատական գործ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, որը սկսել է 12:59-ին: Փաստաբանը մասնակցել է թիվ ՏԴ/0197/01/21 քրեական գործով՝ 15.03.2023թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 28.06.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 27.07.2023թ. ժամը 18:30-ին և 24.08.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Վրեժ Ներկարարյանը ծանուցված է եղել թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործով՝ 15.03.2023թ. ժամը 12:30-ին դատական նիստի մասին: *Սույն փաստը կողմերը ոչ միայն չեն վիճարկել, այլ նաև ընդունել են:*

2. Փաստաբան Վրեժ Ներկարարյանը չի ներկայացել թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործով՝ 15.03.2023թ. ժամը 12:30-ին դատական նիստին: *Սույն փաստը կողմերը ոչ միայն չեն վիճարկել, այլ նաև ընդունել են:*

3. Փաստաբան Վրեժ Ներկարարյանը մինչև դատական նիստը սկսելը հեռախոսազանգով դատարանի աշխատակազմին հայտնել է, որ 15.03.2023թ. ժամը 12:30-ին դատական նիստին չի կարող մասնակցել: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

4. 15.03.2023թ. ժամը 11:58-ին Դիմողի աշխատակազմի էլեկտրոնային հասցեին Վրեժ Ներկարարյանի կողմից ուղարկվել է գրություն, համաձայն որի՝

«Հայտնում եմ Ձեզ, որ Ձեր վարույթում գտնվող քրեական գործով Հովսեփ Վերանյանը դիմել է ինձ՝ փաստաբան Վրեժ Ներկարարյանիս, որպեսզի իրականացնեմ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Նշված գործով դատական նիստը նշանակվել է սույն թվականի հոկտեմբերի 24-ին, սակայն ես՝ որպես Հովսեփ Վերանյանի պաշտպան, 2022 թվականի հոկտեմբերի 24-ին չեմ կարող ներկայանալ դատական նիստին, քանի որ ունեմ առողջական խնդիրներ. ուստի խնդրում եմ դատական նիստը հետաձգել և նշանակել մեկ այլ օր, որպեսզի կարողանամ մասնակցել նիստին»: *Սույն փաստը կողմերը ոչ միայն չեն վիճարկել այլ նաև ընդունել են:*

5. Փաստաբան Վրեժ Ներկարարյանը **15.03.2023թ. ժամը 11:00-ին ունեցել է** մեկ այլ դատական գործ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, **որը սկսել է 12:59-ին: Փաստաբան Վրեժ Ներկարարյանը մասնակցել է թիվ ՏԴ/0197/01/21 քրեական գործով՝ 15.03.2023թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին:** *Սույն փաստերը հաստատվում են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, ինչպես նաև ՏԴ/0197/01/21 քրեական գործով դատական նիստի արձանագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վրեժ Ներկարարյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012 թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Վրեժ Վարդգեսի Ներկարարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի

անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Կանոնագրքի 4.1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:*

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում, ինչով պայմանավորված նրա պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Մասնավորապես, փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ այդ թվում դատարանների և այլ մարմինների առջև, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգանքով վերաբերվի այն մարմիններին, որոնց հետ նա առնչվում է, պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը:

Մասնավորապես փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատավարական կանոններին՝ ներառյալ հարգանքով վերաբերվել դատարանին և դատավարության մյուս մասնակիցներին: Միևնույն ժամանակ փաստաբանի սույն պարտականությունը որևէ կերպ չպետք է կաշկանդի փաստաբանին իր վստահորդի շահերն անվախ պաշտպանելու հարցում՝ ընդհուպ մինչև հաշվի չառնելով սեփական շահերը կամ իր նկատմամբ ցանկացած հետևանք, որը կարող է ծագել նաև դատավորի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ փաստաբանը, դատարանում ներկայացնելով իր վստահորդի շահերը, պարտավոր է ապահովել ողջամիտ հավասարակշռություն իր մասնագիտական պարտականությունները ջանասիրաբար և բարեխղճորեն կատարելու և դատարանի ու դատավարության

մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտականությունների միջև:

Հարկ է նշել, որ սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանը, ծանուցված լինելով թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործով՝ 15.03.2023թ. ժամը 12:30-ին դատական նիստի մասին, չի ներկայացել դրան, սակայն նախքան նիստը սկսելը ինչպես հեռախոսազանգով, այնպես էլ էլեկտրոնային փոստին ուղարկված գրությամբ տեղեկացրել է դատարանի աշխատակազմին, որ չի կարող մասնակցել տվյալ դատական նիստին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործով 15.03.2023թ. ժամը 12:30-ին նշանակված դատական նիստից բացի Փաստաբանը նույն օրը պետք է նաև մասնակցեր Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում թիվ ՏԴ/0197/01/21 քրեական գործով ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին, որն իր հերթին սկսել է ժամը 12:59-ին:

Նման պայմաններում, չնայած նրան, որ Փաստաբանի մասնակցությունը 15.03.2023թ. ժամը 12:30-ին թիվ ՀԿԴ2/0007/01/23 քրեական գործով նշանակված դատական նիստին չի ապահովվել, այնուամենայնիվ, իր մասնակցության օբյեկտիվ անհնարինության մասին Փաստաբանը նախապես տեղեկացրել է դատարանին, ինչով էլ պայմանավորված չի ներկայացել նշված գործով տվյալ դատական նիստին:

Այս համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանին տեղեկացնելու պարագայում, փաստացի միմյանց հաջորդող մի քանի դատական նիստերի առկայությամբ պայմանավորված Փաստաբանի բացակայությունն ինքնին չի կարող դիտարկվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում և առերևույթ չի պարունակում դրա հատկանիշները՝ հաշվի առնելով, որ Փաստաբանի կողմից ըստ էության չեն խախտվել դատարանի գործունեության կանոնները, ինչպես նաև նրա կողմից չի դրսևորվել անհարգալից վերաբերմունք դատարանի կամ դատավարության մասնակիցների նկատմամբ, իսկ բացակայությունը պայմանավորված է եղել մեկ այլ դատական նիստի մասնակցելու անհրաժեշտությամբ:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ գնահատելով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջի խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Վրեժ Վարդգեսի Ներկարարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վրեժ Վարդգեսի Ներկարարյանի (արտոնագիր՝ թիվ 1558) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23018 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23018-2-Ա
24 օգոստոսի 2023թ.
ք.Երևան